ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1895 · ԹԻՒ 2 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 89

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St., New York, N. Y. Vol. V, 1895

ՏԵՍԱՐԱՆ

ՍԱՍՆՈՅ ԿՈՏՈՐԱԾՈՒՆ

(ՍԱՔԸՐՏԷ ԿԼՕՊԷՆ ԱՐՏԱՏՊԵԱԼ)

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" եւ

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեսարան Սասնոյ կոտորածին (պատկեր)— ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ
Ա. Ճշմարտութիւնն Հայաստանի մասին. Բ. Հայ Գաղութք և Հայաստան, Գ. Հնչակ և Հնչակեանք. Դ. Հայք Թերթն և Ամերիկայի Հայերը.— Ստոյգ տեղեկագիր ահաւոր կոտորածին Սասնոյ.— ԻԶՄԻՐԼԵԱՆ Սրբազան քաջարի Պատրիարք Հայոց.— Նամակ Ֆիլատելֆիայէն. Մի նպատակ գործելու.— Հայ կինն և Հայոց Խնդիրն — Վսեմ. Ջանսի Տիփիւ ատենախօսութիւնն Սասնոյ կոտորածին վրայ.— Ռըվիւ Տէ Տէօ Մօնտ Հայկական Խնդրոյն վրայ— Այլ և Այլք.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ա.
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ստոյգ տեղեկագիրն զոր ներկայ թուով կը հրատարակեմք, ցարդ երեւցածներուն լաւագոյնն և քան զամենայն արժանահաւատն է: Մեծ խնամով պատրաստուած է այն մի քանի օտարականաց ձեռքով մերձ ի Մուշ, և մեր ձեռքն հասած է անուղղակի կերպով: Մեք անգլիերէնէ հայերէնի թարգմանելով կը դնեմք զայն առաջի մեր յարգոյ ընթերցողաց: Նոյնն մօտ օրերս ի լոյս պիտի ընծայուի անգլիերէն եւ մի օտարականի կարող խմբագրութեամբ և վերջ պիտի տայ, յուսամք, այն սատայօդ հերքմանց զորս կեղծաւորք այնքան փութով կը կարկատեն ի մեծ գայթակղութիւն քրիստոնեայ աշխարհի: Նաև շուտով ժամանակ կուգայ որ անոնք ալ որ Ամերիկայի միսիոնարաց դէմ խօսեցան յախուռն, պիտի զղջան տեսնելով նոցա ծառայութիւնն յօգուտ Հայ դատին — ծառայութիւն ոչ միայն անձնուէր, քանզի վերջին տեղեկութիւնք կ'ասեն թէ Մշոյ և Բաղէշի միսիոնարք փախչելու կը պատրաստուին առ ահի թրքաց, այլ և իմաստուն և ճարտար, որպէս պիտի ապացուցուի նոցա տեղեկագրութեանց խոհական զգուշաւորութենէն որում երանի թէ հետեւէին մեր բաց-բերան և գոչան ազգայինք:

Բ
ՀԱՅ ԳԱՂՈՒԹՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆրանսական հանդէսներու քան զամենայն աշխարհահռչակն, «Ռըվիւ Տէ Տէօ Մօնտ», Հայոց խնդրոյ քաղաքական տեսութիւն մի նուիրեր է, որոյ կարեւոր մասըն թարգմանուած կը գտնեն մեր ընթերցողք ՀԱՅՔի ներկայ թուոյն մէջ: Օտարականաց աչքին շատ կը զարնէ այն իրողութիւնն թէ Հայաստանէն դուրս ցրուած Հայերն են մանաւանդ որ հայ ազգութիւնն վերակազմել կ'աշխատին: Ճշմարիտ է թէ հարստահարութեանց ենթակայք Հայաստանի Հայք են, սակայն անոնց դժնդակութիւնն զգացող և ամաչողներն Հայ գաղութք են. և այս վերջնոց մէջ է յաւէտ ծագեր ու զարգացեր ազատութեան ոգին: Նոր շարժումներու նախաձեռնութիւնն ալ սոցա շնորհիւ եղած է:

Ուրեմն գաղթականութիւնն որ Հայաստանի համար մեծ աղէտ և անէծք համարուած է, ունի իւր մխիթարական կողմըն, և կրնայ, եթէ անձնուիրութիւնն բարձր աստիճանի հասնի, նաեւ փրկաւէտ հանդիսանալ Հայաստանի համար: Հայ գաղթականութիւնն պարտի աշխարհի ամէն կողմէն սիրոյ անթիւ բազուկներ կարկառել դէպ ի վիրաւորեալ Մայրն, և գրկել ու փրկել զնա:

Գ
«ՀՆՉԱԿ» ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆՔ

Հնչակեան կոչուածներու մեծամասնութիւնն Միացեալ Նահանգաց մէջ է, և կարելի է մօտէն դիտելով տեսնել թէ Հնչակեանն Հնչակի խմբագրութեան ոչ անձնաւորութեանց և ոչ պէսպէս վարդապետութեանց հանգամանքին սիրահար է, այլ միայն մէկ իսկական պատճառ մի ունի Հնչակի կարեւորութիւն տալու: Պատճառն, համառօտիւ, հետեւեալն է: Այս

երիտասարդք համոզուած լինելով թէ լոկ խնդիրքն չազդեր Եւրոպիոյ, այլ հարկ է գործնական և ուշագրաւ բողոք, շուրջ նայեցան և փնտռեցին մարմին մի որոյ օգնութեամբ կարենային գործնական բողոքոյ ասպարէզն անձամբ մանել, կամ բողոքողներուն դրամով օգնել։ Զտեսնելով առ այդ ձեռնտու մարմին, ընդունեցին զՀնչակ, և զայն իբրեւ գործի կամ հանապարհ գործածեցին իրենց նպատակին։

Ամերիկա քան զամենայն ազատ երկիրն է յաշխարհի։ Ասա՝ կարծես թէ մթնոլորտէն մարդ կը ծծէ անհատական ազատութեան ոգին։ Հնչակեաններ կամաց կամաց զգալ սկսած են թէ Հնչակի ամեն խօսքին «ամեն» չեն կրնար պատասխանել և այժմ սոցա ընթացքն աւելի անկախ և պայմանաւոր դաշնակցութեան կը նմանի քան աշքիխուփ հետևողութեան։

Այս կեա նկատելով է որ մի կարեւոր իրատ տալ կ'ուզեմք մեր հնչակեան եղբայրներու, յուսալով թէ կ'ընդունին եթէ լաւ մտածեն։

Թուրք կառավարութիւնն աշխարհի այնպէս կը հռչակէ թէ Սասնոյ Հայոց մէջ բազում օտարականներ (Հնչակեան) կային, և թէ Հայերն իրօք ապստամբած էին և վայրենութիւններ գործած։ Սուլթանին միտքն այն է որ այսպէսով իւր զօրոց չահատակութիւններն արդարացունէ, ասելով թէ ամեն տէրութիւն իրաւունք ունի իւր հպատակաց ապստամբութիւնն զսպելու։ Եթէ զսպելու ատեն ո և է անգթութիւն գործած են զօրքն, այդ ալ Հայոց անգթութիւններէն գրգռուելով գործած են։ Մեք կը պնդեմք թէ Հայերն չէին ապստամբած, և անոնց վերայ բանակ յղելու պէտք չկար։ Հայոց մէջ մի քանիք աւազակներու դէմ զէնք առած են ամենայն իրաւամբ։ Այդու գաւառն ընդվզած չի լինիր կառավարութեան դէմ։ Ուրեմն Բ. Դուռն արդէն անիրաւ էր բանակ յղելովն և բարբարոս եղաւ զօրքի խժդժութիւններովն։

Եթէ մեր ազգայնոց մէջէն ոևէ կուսակցութիւն, լրագիր կամ անհատ, պարծենալու և մեծ գործ կատարած երևնալու համար ձայնարկէ թէ ապստամբութիւն կար, ևն ևն. իւր այդ ձայնարկութեամբք Ազգին տեսլի վնաս կը բերէ քան օգուտ։

Նոյնպէս մեք կը յորդորեմք մեր ազգայիններն որ այս ձմեռ գրչի գործունէութեան ոյժ տան, և աշխարհի ապացուցանեն թէ Օսմանցին բարբարոս է, և թէ մեծ մեղք կը գործէ Քրիստոնեայ Եւրոպա թոյլ տալով որ իշխան այդ կառավարութիւնն չարունակէ ճնչել ու ճմլել զՔրիստոնեայ Հայաստան։

Ֆիզիքական բուռն ոյժ գործածելու ժամանակն եթէ գայ, պիտի դայ Սասնոյ վիճակն քննող Ցանձնաժողովոյ տեղեկագրէն յետոյ, գրչի ուժգին պայքարէն յետոյ, Եւրոպիոյ անհոգ և անիրաւ կարգադրութենէն յետոյ։

Ուրեմն այս ձմեռ ուրիշ բան գոչելու կամ գործելու եղանակ չէ։ Եւ կրնայ Հնչակեանն, յեղափոխականն, ազատականն, նոյն ինքն պահպանողականն աղ Մէկ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ գործել, և եթէ կարելի է մէկ կեդրոնական մարմնոյ միջոցաւ գործել, մինչեւ որ ժամանակն նոր պահանջ դնէ և պէսպէս ուղղութեան հարկ զգան զանազան համոզման տէր ազգայինք։

Դ

ՀԱՅՐ ԹԵՐԹՆ ԵՒ ԱՄԵՐԵԿԱՑԻ ՀԱՅԵՐՆ

Խմբագրութիւնս ծանուցած էր թէ Ամերիկայի բաժանորդներու թիւն պիտի հրատարակէր ներկայ թուով, այն պայմանաւ որ եթէ 600 լինէր թիւն, ՀԱՅՐ հրատարակուէր ամեն շաբաթ եթէ 400՝ ամիսն երկու անգամ, իսկ եթէ նուազ քան 400 ամիսն մէկ անգամ։

Որովհետեւ թիւն 400ի հասած լինելէ իսկ հեռի է, թուոց հրատարակութիւնն գալ անգամու կը յետաձգեմք։ Ծանուցեալ պայմաններուն համեմատ թերթիս հրատարակութիւնն չարունակելու մեր որոշումը վերջնական է։

Որովհետեւ սկսած եմք տարին, պիտի չարունակեմք իբրեւ ամսօրեայ մինչեւ վերջ 1895 թուականիս զիարդ եւ իցէ և որքան ծանր լինի մեր վերայ ինկող աշխատանքն։ Բայց շատ տխուր բան պիտի համարուի Ամերիկայի Հայոց համար, ուր 700 կամ 800 անձինք կան բաժանորդ գրուելու կարող, եթէ առ նուազն 400 հոգի բաժանորդ չլինին և միջոց չհայթայթեն մեզ գոնէ 15 օրն անգամ մի ՀԱՅՐն ի լոյս հանելու։

ՀԱՅՐի 3 թիւն պիտի հրատարակուի 15 օրէն, այսինքն Փետր. 15ին։ Մինչև այդ պայմանաժամ թող փութան Ամերիկայի ազգայինք անել իրենց բոլոր ջանքն և յղել մեզ բաժնեգներն ու ցանկերն, որպէս զի ըստ այնմ չարժիմք։

ՍՏՈՅԳ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՀԱՒՈՐ ԿՈՏՈՐԱԾԻՆ

ՍԱՄՍՈՅ

ՆԱԽԸՆԹԱՑՔ։— 1893ի Մայիս ամսոյ վերջերն, ՏԱՄԱՏԵԱՆ անուն եկաւոր մի յուզիչ բռնուեցաւ Մշոյ մօտ։ Կառավարութիւնն կասկածեցաւ թէ նոյնպիսի յուզիչներ բոյն դրած էին ի Տալորիկ, և Քիւրդ ցեղապետներու հրաման յղեց որ գաւառակին վերայ արշաւեն, ինքն ըստանձնելով բոլոր պատասխանատուութիւնը ամենուն համար զոր պիտի սպաննէին, և խոստանալով Քրդաց թողուլ բովանդակ կողոպուտն։ Տամատեանի Բաղէշ բերուելէն քիչ ժամանակ յետոյ, Յունիսի առաջին եօթնեկում, Բագրանցի Քիւրդք սկսան ժողովիլ ի սարեւ Տալորիկի։ Երբ գիւղացիք տեսան թէ հազարաւոր Քիւրդք օր ըստ օրէ կը կուտակուէին, գուշակեցին նոցա չարադէտ նպատակն և սկսան պատրաստութիւն կատարել։ Ամսոյն Ութին տեղի ունեցաւ մարտն։ Շինականաց զօրաւոր դիրքն կարող արաւ զիրենք բաւական ջարդ տալու առանց իրենց կողմանէ զգալի կորուստի։ Կռուոյն արդիւնքն էր, արեւմտին, իբր հարիւր Քուրդք ըսպաննուած, միայն վեց լինելով գիւղացւոց կորուստն, մին կին մի որ կը ջանայր Քրդաց ձեռքէն ջորի մի պրծել։ Քիւրդք այս բեկումէն սրտաթափ եղած, այլ ևս չէին համոզուէր Հայոց դէմ երթալու։ Ուրեմն Փաշան զօրագնդերով և երկու դաշտային թնդանօթով խաղաց գնաց դէպ ի Տալորիկ, սակայն կա՛մ վասն զի իւր զօրութիւնն անբաւական համարեցաւ, կա՛մ վասն զի հանդարտ մնալու հրաման ստացաւ, չիք ասել թէ ինչո՛ւ, բայց յարձակում չգործեց, և շատացաւ պաշարելով զգաւառակն։ Քաշուելէ առաջ յայողեցաւ, պատանդներ տալով, տեսակցիլ Տալորիկի մի քանի պետերուն հետ, և հարցաւ թէ ինչո՛ւ չէին հպատակիր և տուրք վճարեր կառավարութեան։ Պատասխանեցին թէ կառավարութեան դէմ ապստամբ չեն իրենք, այլ թէ չէին կարող երկիցս տուրք վճարել, մէկ մի կառավարութեան և մէկ մ՚ալ Քրդաց։ Եթէ կառավարութիւնն պաշտպանէ զիրենք, տուրքն անոր վճարելու յօժար են։ Այս բանակցութիւնը արդիւնք չունեցաւ, և պաշարումն շարունակեց մինչև ձիւնեկ։ Զմեռն, բանտարկութեան և չարախօսութեան սաստկաշունչ եղանակին, Տալորիկի հարուստներէն ոմանք հրաւիրուեցան այցելել փաշային, սակայն հրաւէրն ընդունիլ անխոհեմական թուեցաւ նոցա։

Գարնանամտին յանկնթիւ քիւրդ ցեղեր հրաման ընկալան Սասնոյ գիւղերէից վերայ գնալ, միանգամայն Մշէն և Բաղէշէն զօրք յղուեցան, վերջնոյն հետ լինելով ռազմամթերք և տասն բեռ քարիւղ։ Բովանդակ գաւառն պատեալ պաշարեցաւ զօրօք և Քրդօք։ Պաշարեալ գիւղերէն երբեմն մարդ կ՚ելնէր ի խնդիր ուտելեաց։ Քրդեր մի անգամ յափշտակեցին եզներ, և անոնց տեարք հետեւեցան մինչև Քըրդաց վրաններն, և եզանց մին արդէն մորթուած գտան։ Ուզեցին մնացածներն բայց Քուրդք զլացան։ Ասոր վերայ գիւղացիք մեկնեցան և յետոյ վերադարձան մի քանի ընկերներով։ Հետևանքն եղաւ նախամարտ մի, յորում երկու կամ երեք հոգիք սպաննուեցան երկուստեք։ Քրդերը իսկոյն առին տարին իրենց մեռեալները Մշոյ կառավարութեան, և այնպէս տեղեկութիւն տուին թէ օտարամուտ զինուորներ կը վիտային ի գաւառին։ Կառավարութիւնն ամեն կողմէ զօրք ուղեց, և հաւաքեց ութ կամ տասն թապուռ։ Քուրդք ևս կուտակեցան իբր 20,000, հանդերձ 500 Համիտիյէ հեծելազօրք։

ԿՈՏՈՐԱԾԻՆ ԿԵՐՊՆ ՈՒ ԱՐՀԱՒԻՐԲԸՆ։ Ի զկզբան Քուրդք յառաջ մղուեցան, իսկ զօրքն ծածուկ պահուեցան։ Գիւղացիք, այսպէս ի մարտ բռնադատեալ, և կարծելով թէ միայն Քրդաց հետ էր իրենց գործ, ետ մղեցին զայնս քանի քանի անգամ։ Քուրդք զժկամակութիւն ցուցին կռիւն շարունակելու եթէ զօրքն չօգնէր իրենց։ Ուստի զօրաց մէկ մասն Քրդու տարազով գգեցած՝ միջամուխ եղան մարտին բաւական յաջողութեամբ։ Զօրաց փոքր խմբեր մտան այլ և այլ գիւղեր, ասելով թէ հաւատարիմ հպատակներն պաշտպանել էին եկեր, և գտեղեցան տներուն մէջ։ Գիշերային ելան և մորթեցին քնացած գիւղացիքն, այր, կին և մանուկ։ Ասոր վերայ ուրիշ գիւղերու բնակիչք ա՛լ ըմբռնեցին Կառավարութեան նպատակն, որ էր ջնջել գիւղերն սպառսպուռ։ Ազատելէ անյոյս՝ որոշեցին ոգի ի

բռին մարտնչիլ ու այնպէս մեռնիլ։

Յայնժամ մարդախոշոշութեան գործը սկսան Թուրք և Քուրդ, որ տեւեց քսանուերեք օր, կամ խոշորակի, Օգոստոսի միջոցէն Սեպտեմբերի միջոցն։ Ցէրիք փաշան, որ սուրհանդակի արագութեամբ սուրաց եկաւ Երիզայէն, կարդաց Սուլթանի հրովարտակն ջնջման համար, և ապա կախելով գիրն իւր կուրծքէն, յորդորեց զօրականն չթերանալ ի սրբազան պարտուց։ Օգոստոսի վերջին օրն —Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրն— զօրաց քաջալեր կարդացին գերագոյն քաջութեամբ դիւցազնանալ, և արդարև նոա ալ այդ օրն փառաւորեցին ահաւորագոյն կոտորածներով։ խտիր չդրին անձանց և գիւղերու մէջ, թէ արդեօք ո՛յք էին տուրք վճարած և ո՛յք ոչ։ Հրամայուած էր ջնջել համօրէն։ Գիւղերու մէկին քահանայն և երեւելիքն, վճարուած տրոց ընկալագրերն ի ձեռին, գնացին յայտարարել իրենց հաւատարմութիւնն զօրավարին, և հայցել գթութիւն, սակայն գիւղն պաշարեցաւ, և բոլոր մարդկային էակներն սուինէ անցան։ Գիւղապետ մի, այր յաղթանդամ և ուժեղ, կալ և կապ սփռեցին գետին և յօշ յօշ պատառեցին։ Ի կէլիկիւղէն բազմաթիւ երիտասարդաց ձեռք կապած և ոտք կաչկանդած, շարեցին գետինն, կուտեցին ցախ և մացառ անոնց շուրջ և հրկիզեցին կենդանւոյն։ Քահանայի ուրուն վիզն պարան անցուցին և երկուստեք այնպէս քաշեցին որ քանիցս հեղձամղձուկ եղաւ, յետ որոյ վեր յօդս բարձրացուցանելով թող տուին որ վար իյնայ տնկուած սուիններու վերայ։ Գիւղին այր մարդիկն կանամբք և զաւակօք հանդերձ, թուով իբր 500, փախան թաքեան քարայրի մի մէջ։ Օրեր յետոյ զօրքերն գտան զանոնք և մորթեցին որոնք որ դեռ մեռած չէին անսուաղ։ Վաթսուն մանկամարդ կանայք և աղջկունք ընտրուեցան գիւղից մէկէն և դրուեցան եկեղեցւոյն մէջ, և ապա զօրացն հրամայուեցաւ անել ընդ չարաբախտիկ կանանին որպէս անանձնարարոյ կատաղեալք կը ցանկանային, յետ որոյ խողխողեցին ամենքն։ Ուրիշ գիւղի մի մէջ 50 գեղանի կանայք գտեցին և յորդորեցին փոխել իրենց հաւատ և «հանըմ» լինիլ թրքական «հէրէմներու» մէջ, սակայն նոքա սուրբ զայրութիւ մերժեցին ուրանալ զՔրիստոս, նախամեծար համարելով իւրեանց հարց և ամուսնոց բաղդն։ Ժողովուրդ խռնեցին տներու մէջ և ապա կրակի տուին։ Մէկ դէպքի մէջ տղեկ մի վազեց դուրս բոցերուն մէջէն, սակայն սուինի ծայրիւ ետ նետուեցաւ կրակին մէջ։ Շատ տղոց գըլխու մազերէն բռնելով վեր կը վերցուցին և երկուքի կը բաժնէին, և կամ կզակէն բռնած կը ճեղքէին բերանն։ Աւելի տարօր տղոց երկու սրունքներէն բռնած կ'երկփեղկէին մարմինն։ Ծոցեր կնիկներ մորթելով արգանդի պտուղն արտաքս կը թափէին։ Մի նորապսակ աղջոր ամոլք փախած էին ի գագաթ բլրոյ, ուր զօրքեր գտան և առաջարկեցին որ եթէ ուրանան հաւատք և միւսիւլման լինին, իրենց պիտի խնայեն. սակայն երկուքն ալ ահաւոր խողխողումն նախամեծար համարեցան քան ուրանալ զՔրիստոս։ Վերջին դիմադրութիւնն Անտոք լերան վերայ տեղի ունեցաւ, ուր մի քանի հազար անձինք ապաստանած էին։ Քրդեր կրկին ու կրկին յղուեցան զարնել Անտոքն, բայց տասն կամ տասնեհինգ օր անառիկ մնաց լեռն։ Զօրքն ալ իրենց լեռնային թնդանօթներն ուղղեցին դէպ ի Անտոք և ռմբակոծեցին։ Վերջապէս պաշարեալք սպառած լինելով բոլոր վառօդ և ուտելիք, զօրականք առանց կորուստի յաջողեցան լեռն բարձնալ և բոլորն կոտորեցին։

Այնուհետեւ իրենց բոլոր ուշադրութիւնն դարձուցին ի Տալորիկ քաղուածներուն։ Երեք կամ չորս հազար պաշարեալք կային անդ։ Երբ տեսան որ Թրքաց և Քրդաց այնպիսի ահագին կուտակութիւն թանձր պաշարմամբ իրենց շուրջն առեր է, համբարձին զաչս յերկինս, և փրկութիւն հայցեցին հեծեծելով։ Հրացանի գնդակներով նախ ըստ մասին թափեցան, և ապա մնացեալք խոշոշեցան ի սուր և ի սուին։ Այսպէս վերջացաւ կոտորածի գործն։

ՄՈՐԹՈՒԱԾ ՀԱՅԵՐՈՒ ԹԻՒՆ։ Զոհերուն թիւն ճշդամերձ հաշուով իսկ գտնել անհնար է եթէ գաւառին մէջ շրջիլ իսկ կարենար ոք։ որովհետեւ բազում դիակունք նետուած են խրամներու մէջ և հողով ծածկուած, և այլ ոչ սակաւք անձրևի հեղեղներէ քշուած են։ Ուրիշ տեղեր ալ դիականց բազմութիւնն կուտակելով և քարիւղ թափելով, հրկիզեր են։ Սակայն ստոյգ կ'երեւի թէ ամբողջ գաւառին գիւղերն ջնջուած են։ Քուրդ ցեղապետ մի ուշ հասած լինելով՝ տեսաւ թէ իրեն բան թողած չեն կողոպտելու, ուստի և գնաց Հավատօրիկի մերձաւոր ՄԱՆԻԿ գիւղն և զայն կողոպտեց։ Ապահովապէս կրնայ ասուիլ թէ ՔԱՌԱՍՈՒՆ ԳԻՒՂԵՐ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՒԵՐԵՑԱՆ, և հաւանական է թէ առ նուազն ՏԱՍՆԵՒՎԵՑ ՀԱԶԱՐ ՀՈԳԻ ՍՊԱՆՆՈՒԵՑԱՆ։

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ

ՔԱԶԱՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ

Նորընտիր Պատրիարք Ամեն. Մատթէոս Սրբազան ԻԶՄԻՐԼԵԱՆ իւր պաշտօնին համաբերձ կը գանուի քրիստոնէավայել արիութեամբ, որ ոտնակոխ եղած ազգի մի գլխուն համար մանաւանդ փառաւորագոյն պսակն է։ Ներսիսի մահէն ի վեր պատրիարքական գահն իւր բոլոր նշանակութիւն կորուսած՝ Դրան ձեռքն գործի մ'էր եղած Հայոցմէ կորզելու համար դարաւոր իրաւունքներ։ Թէ ներկայ Պատրիարքն որ աստիճանի քաղաքական և վարչական կարողութիւն ունի, այնմ պիտի վկայեն իւր գործեր, սակայն այժմէն այսչափն յայտնի է թէ նա ունի սիրտ, և իւր բարձր կոչման արժանաւոր վեհանձնութեամբ կը կենայ նոյն ինքն ցասմնալից և գոռ Սուլթանին առջեւ։ Նա մեր այն ողորմելի պաշտօնեաներէն չէ որք խորին քաղաքականութեան գործ կը համարին Թուրք կառավարութեան առջեւ պապանձիլ և ազգին արդար բողոքներն գովեստի վերածելով մատուցանել փադիշահին։ Միայն վատ և անարի սիրտ մի կարող է այդպիսի յիմարական շողոքորթութիւններն քաղաքականութիւն կարծել։ Վիրաւորեալ Հայաստանի համար մեծ մխիթարութիւն է ունենալ գլուխ մի, նման ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, որ իւր հեծեծանաց հաւատարիմ և սրտոտ թարգմանն լինի։

Հետեւեալ հեռագրական լուրերն որք Ս. Պատրիարքի արարից վերաբերութեամբ հետ զհետէ երեւցան Եւրոպիոյ և Ամերիկայի Մամլոյն մէջ, մեր այս տեսութեան ապացոյցքն են։

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

(«Լ. Թայմզ» Յունուար 11) Ցեռանդ տեղի ունեցաւ Նորընտիր Պատրիարք Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ գահակալութեան հանդէսն ի Տաճարի Գում-Գափուի։ Հայոց յոգնախուռն բազմութիւն կայր և մեծ խանդավառութիւն։ Նոր Պատրիարքն օրինական ուխտն արաւ հետեւեալ բանաձեւով· «Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային Ժողովոյս կ'ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս և հսկել Ազգ. Սահմանադրութեան ճիշդ գործադրութեանն։» Ապա դառնալով ժողովրդեան, Սր. ԻԶՄԻՐԼԵԱՆ ասաց·

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ցայսմ հանդիսաւոր պահու կը բաղձամ բացատրել թէ ես որպէս կ'ըմբռնեմ իմ ուխտիս երեք մասունքն։ Նախ և յառաջ՝ հաւատարմութիւն առ կառավարութիւնն. հաւատարմութեան զգացմունք պարտին շարժիլ համաքայլ այն համոզման թէ մեր պատուոյ, կենաց և ստացուածոց ապահովութեան իրաւունքն պիտի վայելեմք։ Ոև է յայտարարութիւն որ առանց այս պայմանն ի նկատ առնլու կը լինի, վտանգաւոր կեղծիք մ'է և վնասաբեր թէ Ազգին և թէ Կառավարութեան շահուց։ Երկրորդ՝ իմ հաւատարմութիւն առ ազգն սոսկ է հաւատարմութիւն առ եկեղեցին, քանզի մեր Առաքելական Եկեղեցին պարտք կը դնէ այս երկու զգացմունքերն լծակից պահպանել։ Ազգին և եկեղեցւոյն իրաւունքն նուիրական են և անկապտելի։ Ձեր Պատրիարքն հաւատարիմ թարգման և պաշտպանն պիտի լինի այդ իրաւանց որոց պարզ աւանդապահն է, և որոց հաշիւն պիտի տայ Եկեղեցւոյն և Ազգին։ Երրորդ՝ մեր ներքին գործոց վերաբերութեամբ, իմ անցեալն պէտք է ապահով երաշխիք մի նկատուի թէ պիտի համակերպիմ Սահմանադրութեան տրամադրութեանց և պիտի յարգեմ ու գործադրեմ զայնս։

Սր. ԱԶԱՐԵԱՆ, Հռովմէական Հայոց Պատրիարք, ամսոյս 7ին տեղեկութիւն խնդրեց ՍՐԲԱԶԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆԷ թէ պիտի փոխադարձէ՞ր արդեօք իւր այցելութիւն եթէ ինքն անձամբ երթայր շնորհաւորել պաշտօնն։ Սր. ԻԶՄԻՐԼԵԱՆ պատասխանեց թէ չէր կարող զայդ անել մինչև որ Սր. Ազարեան յետս կոչէր այն սուտ տեղեկագիրն զոր հրատարակած էր ընդդէմ Հայոց և ի նպաստ Բ. Դռան։

Կ. Պոլիս Յունվ. 19. Նորընտիր պատրիարքն ցոյց տուաւ իւր համարձակութիւն։ Հաւատացելոց Հրամանատարին հրապարակային յանդիմանութիւն մի մատակարարեց այնպիսի անկեղծասիրութեամբ մի որ անխոհեմութեան կը մօտենայ։ Երէկ Սուլթանին ներկայացաւ իւր ընտրութեան առթիւ յարգանքներն մատուցանելու համար, և փոխանակ ձեւական և շնորհաւորիչ կերպով խօսելու, Սրբազան

ԻԶՄԻՐԼԵԱՆ ասաց։— Աստուծոյ բարութեամբ և Հայ Ազգին ընտրութեամբն Պատրիարք եղայ Հայոց, և Ձեր Վեհափառութիւն հաստատեց ընտրութիւնս։ Թոյլ տուէք մատուցանել Ձեզ շնորհակալութիւնս այդ հաստատման և այս ունկնդրութեան համար զոր շնորհեցիք ինձ։ Իմ աղատ խղճի համեմատ պիտի կատարեմ պարտաւորութիւններս առ եկեղեցին և ազգն իմ։ Կը մաղթեմ յԱստուծոյ անսասան պահել զՁեզ ի վերայ փառապանծ գահուն ձեր Նախնեաց։

Սուլթանն ապշեցաւ, զայրոյթ գգաց և Պատրիարքին ուղերձին ի պատասխանի սա հատու յանդիմանութիւնն մատակարարեց· բաւական լսած եմ քո անձին նըկատմամբ· աշխատէ հաւատարիմ ծառայ լինիլ և ասա Հայերուդ որ խելօք կենան։

Սուլթանի այս հատու վարմունքի հետևանօք սպասաւորք ծայրագոյն անքաղաքավարութեամբ յուղարկեցին զՊատրիարքն ի մեկնելն։

Վիէննա Յունվ· 23· Սրբազան ԻԶՄԻՐԼԵԱՆ, Նոր Հայ Պատրիարքն, Դատական Նախարարութեան գրեր է, որպէս Պոլսական հեռագիր մի կը ծանուցանէ, թէ Հայաստանի կացութեան նկատմամբ կարեւոր տեղեկագրութեանց դէպ մի գտած է ի սկսիլն իւր պաշտօն, և «վերապահելով հանդերձ, ասեր է, բողոքելու իրաւունքս իրաց այն վիճակին դէմ որուն ներքև կը տառապին Հայք, նախ և առաջ Սասնոյ ահաւոր գործոց կը նուիրեմ հոգածութիւնը։» Յաւով յիշած է նաև Մշոյ եպիսկոպոսին և այլ եպիսկոպոսաց բանտարկուած լինելն, և աւելցուցած է· «Այսպիսի պարագայից մէջ ուրիշ եկեղեցականներ յղել խռովեալ գաւառներն խնդրէ դուրս է, և ես պարտաւոր եմ, Սասնոյ գործերն կարգադրելու համար, մասնաւոր պատուիրակ մի յղել ի Սասուն։»

Վիէննա, Յունվ· 28·— Դատական Նախարարն ետ դարձուց Հայոց Պատրիարքին թագրիրն Մշոյ եպիսկոպոսին բանտարկութեան և այլ հայ առաջնորդաց վերաբերութեամբ, և պահանջեց որ Պատրիարքն այդ թղթոյ պարունակութեան կարեւորագոյն մասն մէջէն վերցունէ։ Սր· ԻԶՄԻՐԼԵԱՆ թագրիրն ետ յղեց անփոփոխ, ասելով թէ չէր կարող հշմարտութիւնն յապաւել։

ՆԱՄԱԿ ՖԻԼԱՏԷԼՖԻԱՅԷՆ

ՄԻ ՆՊԱՏԱԿ ԳՈՐԾԵԼՈՒ

Իրաց ցաւալի վիճակն, մանաւանդ վերջին մի քանի տարիներուս մէջ, ստիպեցին մեզ գուշակել Հայուն ապագան ևս աւելի ցաւալի լինիլ, և իրականն այսօր այնպէս է։ Գրեթէ երեք տարիներ առաջ «THE ARMENIANS»ի մէջ հետևեալ դժբախդ գուշակութիւնն արի Հայոց անտանելի հարստահարութիւն պատմելէ յետոյ—

«Այս ողբալի երկրին և ժողովրդեան տառապանաց և հարստահարութեանց վիճակն ո՞ւր և ե՞րբ պիտի վերջանայ։ Երկու բանից մին, վաղ կամ անագան, անհրաժեշտ տեղի պիտի ունենայ· այսինքն, կամ Ռուսիոյ բռնակալութիւն պիտի տեղափոխէ Թուրք բռնաբարութիւնն, կամ քրիստոնէից մի մեծ և ընդհանուր կոտորածն պիտի հետեւի, քանի որ անոնք իրենց անձնապահպանութեան և անձնագոյութեան համար միայնակ կը ջանան։»(*)

Երանի թէ այս գուշակութեան չկատարուած մասն կատարուած լինէր, այն ատեն անգութ Թրքին երկաթէ լուծը պիտի կտրուած լինէր։ Բայց աւա՜ղ, իրաց տխուր վիճակէն ոտիպեալ պարտիմ ասել թէ Սասնոյ կոտորածն դեռ չպիտի լինի Հայոց կոտորածներուն վերջինն։ Մեզ այսպէս խորհելու ստիպող երկու պատճառներ կան, այն է մին, թէ Սուլթան Համիտէն սկսեալ մինչև ամենանուաստ Թուրքն այսօր լեցուած է մահաբոյր ատելութեամբ ընդդէմ Հայոց։ Եւ այս ատիճան թշնամութեան գոյութեան պատճառն ևս Թրքական կառավարութիւնն է։ Երկրորդ պատճառն այն է, թէ Եւրոպական տէրութիւնք չվարուեցան և չերևիր թէ պիտի վարուին դաղանաբարոյ Թրքին հետ այնպէս որ կարող լինէին զսպել այն գիշատիչ գայլերու նման էակներն Հայոց անսեղ և անպաշտպան գառներուն վերայ յարձակելէն։ Այս դիտողութիւնք չեն ցնորք։ Ուստի ի՞նչ է իւրաքանչիւր Հայու պարտականութիւն այպիսի պարագայի մը տակ։

(*) Տես «THE ARMENIANS» էջ 118։

Օտարք լաւ հասկացած են Հայոց տըկար կէտն, այն է անմիաբանութիւն։ Հայոց անցեալն եւ ներկայն պէս տխուր եղած է, այս՛ ողբալի եղած է այս անմիաբանութեան պատճառաւ։ Անօգուտ է ասել, Հայե՛ր միանանք։ Մենք չենք ըներ այդ, բայց եթէ կարելի չէ որ միութիւն մի գոյանայ Հայոց մէջ, ներեցէք ինձ խընդրել ամեն Հայէ գործել մի նպատակի համար, և այս թող լինի այդ նպատակ. թախանձել Անգլիոյ անարդար կառավարութիւնն, որ նման անիրաւ դատաւորին, եթէ ոչ արդարութեան սիրոյն, գէթ մեր թախանձանաց համար Մեծն Բրիտանիա ելլէ և մեզի ըրած չարեաց փոխարէնը հատուցանէ, մեր իրաւունք տալով մեզի։

Անգլիա երեք կերպերով կրնայ բոլոր դժուարութիւնն լուծել — Նախ ստիպողական կերպով պնդել Թուրքն որ կատարէ խոստացեալ բարենորոգումներն. եթէ այս կերպիւ չի յաջողիր Թուրքն հնազանդեցնել, երկրորդ, Անգլիա կրնայ գալ այնպիսի հասկացողութեան մը Ռուսիոյ հետ որ երկուքն միասին պնդեն, և առանց այլեւս կաթիլ մը արեան Թուրքն պիտի տայ Հայոց իրենց իրաւունք։ Եթէ յամառ Մոնկոլցին կրկին կը մերժէ, այն ատեն Անգլիա պարտի թողուլ Կիպրոս կղզին և վերջացնել իր դաշնագրութիւն Թրքին հետ, և Ռուսիա 18 տարիներ զինադուլ ընելէն յետոյ կը սկսի իր պատերազմը շարունակել Թրքաց դէմ, և ոչ միայն Հայաստան, նաև Փոքր Ասիա և գուցէ ուրիշ տեղեր եւս Ռուսիա պիտի գրաւէ։

Մեր թախանձանք լսելի ընելու միջոցներուն վրայով ՀԱՅՔ լաւ խօսած է, և հարկ չէ կրկնել զանոնք։ Բայց եթէ ներելի է ասել, ՀԱՅՔի առաջին թելադրութեան կարեւորութիւնն ճանչնալով էր որ հրատարակեցի երեք տարիի չափ առաջ «THE ARMENIANS», և այժմ պատրաստած եմ մի փոքր տետրակ անգլիերէն լեզուաւ որ կը պարունակէ վերջին երեք տարիներու խիստ կարեւոր դէպքեր, և յուսալի է թէ շուտով միւս մատուցուի հասարակութեան։

Մ. Զ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՎՍԵՄ. ՉԱՆՍԻ ՏԻՓԻՒԻ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆ

ՍԱՍՆՈՅ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՎՐԱՅ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԴԵԿՏ. 30, 1894

Շատ յարմար կը թուի ինձ որ 1894 տարւոյ վերջին ժամերն նշանակուին Քրիստոնեայ ժողովրդոց բողոքարկութեամբըն ընդդէմ այն խժդժութեանց որք մեռնող տարւոյն անմոռանալի նախատինքն պիտի լինին։ Տարին բարեբաստիկ չեղաւ։ Սակայն անցեալ 12 ամիսներու ելմտական և առեւտրական համասփիւռ տագնապն ժամանակաւոր է և կորուստքն դարմանելի են, մինչ Սասնոյ մարդկային կորուստըն անդարմանելի է և պատմութեան մէջ արիւնագիր գլուխ մի պիտի կազմէ։ Ա՛յնպէս պարտ է սկսիլ նոր տարին որ նմանօրինակ արհաւիրք չկարենան կըրկնուիլ 1895ին։

Տասեւիններորդ դարու պարծանաց դէմ երգիծաբանութիւն մ՚է այն որ առիթ կը լինի այսպիսի միթինկի մի, բայց և միանգամայն պատիւ մ՚է դարուս ոգւոյն որ այսպիսի միթինկ մի կրնայ տեղի ունենալ։ Կրօնական հալածանք և պատերազմունք, արիւնահեղ վրիժառութիւնք ամեն դարու մէջ եղած են, սակայն ԺԲէն մինչև ԺԹդար դոքա քիչ ուշադրութեան արժանացան արտաքոյ այն երկիրներուն ուր պատահեցան։ ԺԹ դարու իրական փառքն է միջազգային կարծեաց ստեղծումն, որ կը դատապարտէ ազգային նշանակութիւն ունեցող ամեն ոճիր։

Հայաստան վերջին աստիճան համակրելի է մեզ։ Չորս միլիոն ժողովուրդ, առաքելական հարազատ յաջորդութիւն ունեցող եկեղեցիով, տոկած տեւած է անվհատ ու քաջահաւատ այնքան աղէտներու մէջ որք լքուցիչ են յուսոյ և հաւատոյ։ Թուրք Տէրութիւնն տարբեր է ամեն Տէրութենէ։ Այն նուիրապետութիւն մ՚է իւր կրօնն տարածելու համար, իշխանութիւնն կրօնական է, և բանակն կըրօնական նպատակաց պէտք է ծառայէ։ Այսպիսի ոգւով հիմնարկութեան մի բնա-

կան եղող գազանութիւնք էին որք արթնցուցին զԵւրոպա և Յունաստանի, Ռումանիոյ, Սերպիոյ և Պուլկարիոյ տուին գտնել ազատութիւն։ Պէռլինի դաշնագիրն ճանչցաւ այդ նորակազմ պետութեանց ինքնավարութիւնն և պարտք դրաւ Եւրոպիոյ Քրիստոնեայ ազգաց վերայ՝ պաշտպանել այն քրիստոնեայ ժողովուրդներն որք դեռ ևս Թուրք տիրապետութեան ներքև կը մնան։ Եւ այդ յանձնառութենէն յետոյ է որ Հայաստանի գլխուն կուգայ այսքան աղէտ։ Օ՛, դիւանագիտութի՛ւն, դիւանագիտութի՛ւն, որքան ոճիրներ կը գործուին յանուն քո։ Զօրութեանց հաւասարակշռութեան վարդապետութիւնն ի՛նչ գազանութիւններ կը թոյլատրէ։ Խաղաղութիւնն Եւրոպիոյ ի՛նչքան սուղի կը նստի։ Ահա Թուրքն ինքն կը վրդովէ Եւրոպիոյ թանկ խաղաղութիւնն։ Թուրքն ունի ի՛ւր արդարութիւնն, Գուրանի օրէնքն։ Չի՛ք դատաւոր, չիք օրէնք, չիք արդարութիւն, չիք ազատութիւն։ Հայաստանի քրիստոնեայք մատնուած են բորբարոսի քմահաճոյից։ Եւ այդ բարբարոսի արարք յիրաւի ապստամբեցուցիչ են Հայոց որք Արեւելից Նիւ Ինկլէնտցիներն են, ուշիմ, աշխատասէր և տնտես։ Կրկին և կրկին բողոքած են նոքա Եւրոպիոյ, բայց անլսելի մնացած։ Նախախնամութիւնն կը գործէ սակայն։ Սասնոյ դռոյթն արթնցուց զԵւրոպա և ստիպեց դահլիճներն կատարել իրենց պարտաւորութիւն։

Աշխարհ բաւական ուշիւ չսեւեռեց աչքն այն գերազանց ողբերգութեան վերայ որ Սասնոյ առման պահուն տեղի ունեցած է՝ դիւցազնուհւոյ մի գահավիժմամբն սարէն ի վար։ Մի քանի տարիէն վիպագիր մի պիտի անմահանայ զայն անելով իւր վիպասանութեան կեդրոն։ Մի քանի տարիէն քերթող մի բանաստեղծութեան նիւթ պիտի առնու զայն և իւր գրուածն Քէմփպէլլի, Մէքօլէյի և Թէննիսընի դիւցազներգութեանց քով պիտի դրուի։ Ատենաբան մի այդ պատմութեան և անոր դասուն պիտի տայ կազմուած և ներշնչում ա՛յնպիսի որ դպրոցի և Ուսումնարանի բեմերէն տղոց և աղջկանց շրթունքէն արտասանուի և դարէ ի դար կրկնուի իբրև յաղթանակն հայրենասիրութեան և հաւատոյ։

Երէկ աշխարհահռչակ մարդ մի, հզօր մարդ մի տօնեց իւր 85դ տարեդարձն։ Նա վարիչն եղած է Բրիտանական Կայսրութեան, և այսօր սովական քաղաքացի մի է։ Ամենուստ իրեն ուղղուած շնորհաւորութեանց ի պատասխանի իւր գլխաւոր խօսքն եղաւ զայրագին բողոք մի ընդդէմ այն գազանութեանց որոց ենթարկուած են Հայ Քրիստոնեայք, և կոչում մի առ քրիստոնեայ ժողովուրդս աշխարհի ստիպել իրենց կառավարութիւններն ի սանձահարել զգազանն։

Ի շրթանց Տիար Կլատսթոնի արձակուած այս հրաւէր և այս սաստ փալատակեցին ցամաքէ ի ցամաք և ընդծովեայ հեռագրովք, թափանցեցին դահլիճներն, որոտացին յունկն վեհապետաց, և ազգաց ու ազանց սրտի թելերն հնչեցուցին։

Վաղն, ո՛չ, այսօր իսկ, Ռօզպէրի կը խորհրդակցի Ֆռանսայի Նախարարապետին հետ, և Ֆռանսա ու Անգլիա կը խօսին գերմանիոյ կայսեր, երիտասարդ Զարին, և Իտալիոյ Թագաւորին, և Աւստրիոյ կայսեր, միացեալ գործողութեան նկատմամբ որ զԹուրքն ի գութ պիտի ածէ առանց խանգարելու Եւրոպիոյ հաւասարակշռութիւնն։

Մեք յԱմերիկա ունիմք ապաստանարանն ամենայն ցեղից. ամեն ազն ունի աստ իւր ներկայացուցիչն։ Մեք ի խնդիր չեմք օտար նիզակակցութեանց, և ոչ միջազգային կռճիռներու, սակայն Ամերիկեան ազատութեան զօրութիւնն ունիմք և կը ճանաչեմք համաշխարհային եղբայրութիւն։ Կրնայ Ուօշինկթըն լռել, այլ 68 միլիոն հոգիք կարող են խօսիլ լեզու մի որ լսելի լինի ամեն ուրեք, և թէպէտ ոչ սակաւ լինին լեզուք, լինի մի ձայն, ազատութեան ձայնն և հռչակէ ու պահանջէ ազատութիւն խղճի իւր եղբարց համար ի հեռաւոր Արեւելս։ 1894ի ելից սեմին վերայ այս է պատգամն ազատ Ամերիկայի։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանըս դրամ յղողներն՝ Նիւ Եօրքի փոստ օֆիսին Station E :(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՀԱՅԿ ԿԻՆՆ

ԵՒ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐՆ

Ա.

Թէ հայ կինն և հայ օրիորդն ինչ կարող է գործել ազգային այս պատմական ժամանակիս, չունիմք նշանակել այս տողերուս մէջ. այլ միայն նոցա առջև դնել ԺԸ ֆռանսական մեծ դարուն կանանց օրինակն, յորմէ պիտի կրնան մերազնուհիք մակաբերել թէ իրենց դասակարգութեան և պէսպէս բարեմասնութեանց, նիւթական պայմաններուն և միջավայրի զանազանութեան նայելով, ի՛նչ տարբեր դերեր կրնան կատարել։

Բ.

Ֆռանսական մեծ Յեղափոխութենէն բաւական առաջ մտքի յեղափոխութիւնն իբրեւ խորին և հիմնական գործ, կը կատարուէր իմաստասէրներու, տնտեսագէտներու և քաղաքագէտներու մտային արտադրութեամբք։ Ռուսօ, Վոլդէռ, Մոնդէսգիէօ, Դիւռկո, Տ'Ալամպէռ, Տիտռօ և այլն կը խորհէին, կը գրէին ու շատ կը խօսակցէին, և նոր գաղափարներ, բարեկարգութեան սերմեր կը սերմանէին ընկերութեան մէջ։ Քաղաքական գործոց ասպարէզէն դուրս թողուած էին այդ մտքի մշակներն (Դիւռկո բացառութիւն,) և քաղաքական ազատութիւն չկար. բայց նոքա իրենց ապաստանարան կը գտնէին նշանաւոր տիկնանց սալոններուն մէջ, որոց մի քանին իմաստնոց կատարեալ կաճառի հանգամանք առին և ահագին ազդեցութիւն գործեցին։

Վոլդէռի մտերիմ բարեկամն էր Տիկին տիւ Շադլէ, որոյ դղեկին մէջ հիւր եղաւ երգիծաբան մատենագիրն երկար տարիներ, և այդ Տիկին իւր իմաստասէր հիւրին չափ տաղանդաւոր էր և գերազանց յաջակութեամբք օժտեալ։ Գիտէր Լատիներէն, Իտալերէն և Անգլիերէն, և այնքան բարձր միտք ունէր որ կը զօրէր հասու լինիլ Նիւտոնի և Լայպնիցի խորհրդոց։ Բնաւորութեան տեսակետով Տ. Շադլէ գեր ի վեր էր քան զՎոլդէր, զի սա չափազանց զգայուն էր իրեն դէմ եղած յարձակմանց, մինչ ազնիւն Շադլէ անտարբեր կը մնայր։ Օր մի երբ Շադլէի ներկայացուցին տետրակ մի յորում իրեն ալ խնայած չէին, հանդարտութեամբ պատասխանեց. «եթէ հեղինակն վատներ է իւր ժամանակ գրելու այսպիսի անիմաստ բաներ, ես չեմ կրնար վատնել զիմքս կարդալով զայնս։» Յաջորդ օրն իմացաւ թէ զրպարտիչն բանտարկուած էր, և իսկոյն գրեց որ ազատ թողուն զնա։ Յանցաւորն չիմացաւ իսկ թէ որո՛ւ շնորհիւ ազատեցաւ։ Նորա ընկերութեան մէջ սովորաբար գտնուող ոչ սակաւ անձինք անգիտակից մնացին նորա մեծ տաղանդին, ա՛նքան անփոյթ էր տաղանդաւոր Տիկինն ինքզինք ցուցնելու։ Նա արհամարհեց ազէտներու մէջ փայլելու դիւրին առաւելութիւնն։ Սակայն և այնպէս դարուն մեծ խորհողներուն սքանչանաց առարկայ եղաւ և մեծ ազդեցութիւն գործեց իրրև մին ի կանանցի առաջնորդաց ընկերութեան։

Ռուսօ ևս ունէր իւր մասնաւոր բարեկամուհին, այն է Տիկին տ'Էբինէյ, որոյ սալօնն կը յաճախէին հեղինակք և արուեստագէտք։ Այս Տիկինն ոչ պատրաստարանութիւն ունէր և ոչ իւրածին մըտքեր, սակայն ողջամիտ էր և անսեթեւեթ իւր բանից և վարուց մէջ։ Խօսակցութիւնը պաղ էր և հասարակ, բայց ուրիշներուն խորհուրդներն հասկանալով կազդուէր, այնպէս որ Կռիմի հետ խայթող և Ռուսօյի հետ զգայնիկ կը դառնար։

Գ.

Այդ ժամանակամիջոցին Բարիզեան մշակեալ ընկերութեան նշանաւորագոյն կեդրոններն երեք տիկնանց Նախագահութեան ներքև էին։ Կաճառի երևոյթ առած երեք գլխաւոր սալոններն էին Տիկին տիւ Տէֆանին, Օրիորդ ալ Լէսպինասի և Տիկին Ժոֆռէնի։ Մոնդէսգիէօ դոցա ազդեցութեան կ'ակնարկէ հաւանօրէն յանելն թէ ազգ մի յորում կանանց ձայնն յարգելի է, շատ խօսակցող ազգ մի կը դառնայ այն ի հարկէ։ Իրողութիւնն այն է որ խօսողներն արք էին, իսկ կանայք մտիկ կ'անէին։ Այր մարդիկ կը խօսէին վասն զի շատ գաղափար ունէին իրարու հաղորդելու, մտքերն բորբոքած էին, և գործելու ժամն դեռ չէր հասած. և բոլորն ալ ըստ մասին ստիպուած էին և ըստ մասին յօժար ժողովուելու կանանց շուր-

ջրն, ուր աղաւորէն կ'արտնայայտէին այնպիսի հայեացք և քննադատութիւններ, զորս եթէ յայտնապէս հրատարակէին, հալածանաց կենթարկուէին։

Տիկին տիւ Տէֆան մարգիզուհի մ'էր, որոյ սալօնն կը դիմէին փափկավար, շըռայլ և սկեպտիկեան ազնուականք։ Առաջին կինն կը համարուէր իբրեւ մտացի և պատրաստաբան, նաև հրապուրիչ էր յոյժ։ Սակայն և այնպէս կեանքն ձանձրալի էր նմա։ Ձանձրոյթն ուրիշ բոլոր ուսումնականաց ալ բաժինն էր, զի գործ չունէին։ Սակայն այս տիկինն աւելի կը նեղուէր քանզի անսիրտ և անձնասէր ոք էր։ Փիլիսոփայից ջեռմեռանդագիններն շատ չէին երթար այս պաղսիրտ կնոջ քով։ Տիտռօ միանգամ այդելեց, հայեցաւ Նորա եպիկուրեան բարեկամաց վերայ արհամարհանօք, և մէկ մ'ալ չերևցաւ։ Բայց եթէ այնքանիք հրապուրուած կը յաճախէին իւր տունն, պատճառն այն էր որ Տիկին տիւ Տէֆան երբէք իւր անզգայութիւնն չէր ջանար կեղծ զգացականութեամբ պատրուակել, և էր այնքան ազատախօս որքան սրախօս և ուշիմ։ Նախարարք, տիտղոսաւոր տիկնայք, իմաստասէրք, հռչակաւոր օտարականք կ'երթային Նորա տան մէջ միշտ իմացական զբօսանք վայելելու, և յաճախ համադամ կերակուր, զի տիկինն սովոր էր ասել թէ ընթրիքն մին է այն չորս մեծ նպատակներէն որոց համար մարդս կ'ապրի։ Քաղաքավարութիւնն հոն իւր գերագոյն փափկութեան հասած էր, առանձ արուեստակութեան։

Ընտիր գրական շրջանակ մի կազմուած էր Օրիորդ տը Լէսպինասի շուրջն։ Բարեկարգութեանց ջատագով տնտեսագէտք և իմաստասէրք այդ սալօնի յաճախողներն էին մասնաւորապէս։ Դիւռկո, սքանչելին Դիւռկո, որ վերջապէս նախարար եղաւ, Մօռէլէ, Տիտռօ, Տ'Ալամպէռ, Մառմոնդէլ, Սէն Լամպէռ իւր հաստատ հիւրերն էին, և իւր տունն վառարան մի դարձուցին, ուրկէ ամեն կողմ կը ճառագայթէին ելմտական, քաղաքական և գրական վարդապետութիւնք։ Ինքն աւելի ունկնդիր էր քան խօսող, բայց երբ խօսէր, հիանալի կերպիւ կը խօսէր։ Հակապատկերն էր Տիկին տիւ Տէֆանի՝ զգացմանց տեսակետէն, զի սրտէն կը բխէին իւր բանք, և ներքին հուրն իւր լեզուին կ'ընծայէր կիրք և ջերմ պերճախօսութիւն գերազանց։ Այդ իրարմէ կարծեօք տարբերող գիտնոց խօսակցութիւնն կը կառավարէր առանց սանձահարելու, զի գիտէր անբաղդատելի փափկահպութեամբն ուղղութիւն տալ և վարել այնպէս որ ոչ դառն պայքար ծագէր և ոչ անիմաստութեան մէջ իյնար։

Գալով Տիկին Ժօֆռէնի, համառօտիւ ասենք թէ հանդարտ պուռժուազ մ'էր նա, պարզազգեաց և քիչ ուսեալ, սակայն խորին հասկացողութիւն ունէր աշխարհային բաներու, գերազանց փափկահպութիւն և լայն բարեսրտութիւն։ Բարիզի աշխարհահռչակ սալօններէն մին եղաւ իւրն, այնքան որ գերմանական արքունիք յատուկ թղթակիցներ կարգեցին իրենց ծանուցանելու թէ ինչ նիւթերու վերայ հակաճառութիւն կը լինէր Տիկին Ժօֆռէնի տան մէջ։ Ժամանակին ազնուական և փափուկ բացատրութեանց ընտանեցած էր և զմայլելի խօսակցող մ'էր, բայց և այնպէս երբէք իւր չափէն դուրս չէր ելնէր և դիտողութիւն չէր աներ ոչ է խնդրոյ վերայ զոր չէր հասկանար։ Խիստ և հաճոյակատար միանգամայն էր։ Դիւրագրգիռ էր, բայց ինքզինք կրնար զսպել, և դատողութիւնն ուղիղ ու խորաթափանց էր։ Ամենուն թերութիւններն կը տեսնէր, սակայն որտին բարութենէն՝ հեզ և քաղցր կերպով կը վարուէր թերութեանց հետ։ Այս մեծանուն Տիկին մեռաւ 1777ին ի հասակի 78 ամաց։

Դ.

Ֆռանսական աղդին ԺԹ դարու պատմութեան վերայ այս հարեւանցի ակնարկէն կը տեսնուի թէ այն մեծ դարու մեծ հեղինակներն որքան բան կը պարտէին Տիկնանց։ Գիտուանքն ոչ միայն ազատ խօսելու ապահով մի վայրի մէջ իրարու կը հանդիպէին այդ սալօններում, այլ և կանանց հասկանալի լինելու համար ստիպուած էին այնքան պարզ բացատրութիւններ ստեղծել որքան հնար էր։ և այդ պատճառաւ ֆռանսական լեզուն հասաւ ծանուցեալ պարզութեան այն բարձր աստիճանին։ Մանաւանդ թէ խօսակցութեան մէջ երկարաբան ճառախօսութիւն ներելի չլինելով, խօսողքն կը ջանային ոչ միայն պարզ այլ և կարճ ու կարուկ ոճով խօսիլ, որքան վայելուչ և սրամիտ բացատրութեամբք։ Թէպէտ այն դարն անցաւ և ֆռանսական ցեղափոխութենէն յե-

տոյ Ֆռանսացի տիկնանց այն ընկերային իշխանութիւնն վերջացաւ, սակայն գաղափարք ոփռուած եղան և լեզուն ստացաւ նոր շնորհալի պարզութիւն և ճկունութիւն։ Մինչև այսօր ալ Ֆռանսացին կրնայ առաջին ժողովուրդն համարուիլ խօսակցութեան արուեստին մէջ, յորում անկուգական պատրաստաբանութիւն կը ցուցնէ և յորմէ կատարեալ հաճոյք կը վայելէ։

Ե

Արդեօք Մեր Բարիզի, Մանչէսթրրի, Գահիրէյի, Նիւ Եորքի և այլ գաղթային կեդրոններու մէջ հայ տիկիններ ի՞նչպէս կը ծառայէն հայ դատին. արդեօք դոցա շնորհաբեր և կրթիչ ներկայութեամբ և մասնակցութեաբմ կը ծեծուի՞ն այն հայկական խնդիրներն որք ներկայի այրող խնդիրներն են մինչև անդամ Եւրոպացւոց համար։

ՌՎԻԻ ՏԷ ՏԷՕ ՄՕՆՏ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՑՆ ՎԵՐԱՑ

«... Աւելի կամ նուազ ծանր խռովութիւնք պայթեր են Հայաստանի ինչ ինչ կետերուն վերայ։ Արիւնն հոսած է և ընդ հուպ զրոյց տարածուած է թէ ապստամբութիւնն բարբարոսաբար են գսպեր։ Մանաւանդ յԱնգլիա, հանրային կարծիքըն սաստկապէս յուզուած է։ Հայք, ինչպէս գիտէք, այժմուս ցրուած են ընդ բոլոր աշխարհ. յԱնգլիա, Ֆռանսա, Ռուսիա, Ամերիկա, և ամեն ուրեք յոյժ գործունեայ Յանձնախմբեր են կազմեր, որք մեծանձն պաշտպաններ կը փնտռեն ու կը գտնեն։ Տիար ԿԼԱՏՍԹՈՆ Հայկական Դատին պաշտպաններէն մին է, և իւր վերջին դահլիճին մէջ մտուց զՏիար ՊՐԱՑՍ, որ նոյնին տիտղոսաւոր ջատագովն է. այս կը նշանակէ թէ Անգլիական Նախարարութեան ծոցին մէջ իսկ Հայք վստահ էին անձնուէր նեցուկներ գտնել։ ... Հայաստանի կարեւորութիւնն բոլորովին իւր աշխարհագրական դրից մէջ է։ Երկիրն աղքատիկ է, սակայն այն առաւելութիւնն ունի որ չուկէան է երկու բնական ուղիներու որոց մին կը տանի դէպ ի պարսկային ծոցն և միւսն դէպի Իսկէնտէրունի ծոցն։ Հայ ազգայնութիւնն, դարերէ ի վեր կքած լինելով տաժանակիր տիրապետութեան մի ներքև, ոչ ևս գոյ է իրօք, սակայն իւր ցրուեալ անդամք ի խնդիր են հաւաքուելու, և Տէրութիւնք ոմանք կրնան փորձուիլ օգնել նոցա առայս, այն նոյն շարժառիթներով որք բերին երբեմն զՌուսիա ի ստեղծել Պալքանեան իշխանապետութիւններն կամ թագաւորութիւններն, և զԱւստրիա, կամ զԱնգլիա, ի յափշտակել Ռուսիոյ տեղն՝ գերակշիռ ազդեցութիւն ի գործ դնելու համար այդ ժողովրդոց և նոցա կառավարութեանց վերայ։ Այս քաղաքականութիւն բաւական յաջող չեղաւ Ռուսիոյ մասին որպէս զի զնոյնն ի գործ դնել ուզէր և այլ կետերու վերայ։ Այս միջոցիս յաւէտ Անգլիա կը թուի ունենալ, կամ կարծել ունենալ, շահ իւր հովանաւորութեան ներքև հայ ազգայնութիւն մի վերակազմելու. Ռուսիա, սակայն, չի կրնար անտարբեր մնալ քաղաքական գործի մի որ ընդդէմ իւր պիտի կատարուէր եթէ առանց իրեն կատարուէր, և իրեն մեծապէս կարեւոր է, եթէ օր մի հայ ազգութիւնն վերակազմուէր նորա ասիական սահմանագլխոյն վերայ, օտար գտնուած չլինիլ այս յարութեան։»

ԱՑԼ ԵՒ ԱՑԷՔ

Լ. ՏԷՅԼի Նիւզի կը ճեռագրեն Կ. Պոլսէն.— Տր. Ս. ՀԱՄԼԻՆԻ հեռագիրն զոր հրատարակեցիք ձեր սիւնակաց մէջ, աւելի նշանակութիւն ունի քան առաջին հայեցուածով կ'երեւի։ Խրիմի պատերազմի ժամանակներէն սկսեալ մինչև ներկայս իբր 18 տարի առաջ՝ քիչ մարդիկ իրեն չափ ճանեչեցին զԹուրքն։ Բոպէրթեան վարժարանի հիմնադիրն, Թուրքիոյ վերայ յօդուածոց և գրքերու հեղինակն գոլով, նա միշտ պատրաստ եղեր է ի նպաստ Թրքաց խօսելու երբ և կարելի եղած է։ Իբր 18 ամիս առաջ Պատ. ՀԱՄԼԻՆ, որ տարիներէ ի վեր յԱմերիկա կը բնակի, կը պատահի միում այն կատաղի որերոյն զոր հարստահարութիւնն կը ստեղծէ, և որ իմացոյց նմա թէ ինքն և իւր մի քանի հայրենակիցք յԱմերիկա՝ դրած էին ի մտի պատճառ տալ խժդժութեանց ի Հայաստան, որպէս զի միւսիւլման ժողովուրդն ալ նոյնն գործելու գրգռուէր։ Տր. ՀԱՄԼԻՆ, իրեն յատուկ կորովով, Նիւ Եորքի թերթերէն միոյն մէջ իսկոյն դատապար-

տեղ այդ ծրագիր իբրեւ դժոխային: Հաւանականօրէն չկայ բանաւոր մարդ մի, և ստուգիւ չկայ Հայոց բարեկամ մի, որ յայդմ չհամաձայնի նմա:

Կոտորածէն ի վեր այդ նամակ նորէն տպուեր և Ամերիկայի և Կ. Պոլսոյ մէջ ընդարձակ շրջաբերութեան հանուեր է: Սակայն երբ իմացաւ զայս, Տր. ՀԱՄԼԻՆ փութաց հեռագրել ձեզ ուժգին ոճով որպիսեաւ տուած էր իւր առաջին նամակն, և նետեց պատասխանատուութիւնն Թուրք կառավարութեան ուսոց վերայ: Այս բացատրութեամբ հեռագիրն այնքան աւելի նշանակիչ կը լինի որքան անոր հեղինակն ի վեր է քան ամեն կասկած և միշտ նըկատուած է բարեկամ Թրքաց:

(Տր. ՀԱՄԼԻՆԻ հեռագիրն երեւցաւ մեր (Տէյլի Նիւզի) Դեկտ. 22 թուով, և էր սապէս — «Թուրք կառավարութիւնն կը գործածէ իմ նամակս նկատմամբ Հնչակեան անզօր և յիմարական ծրագրին՝ արդարացունելու իւր սոսկալի գազանութիւններն: Թուրք կառավարութիւնն գիտէր թէ Հայաստանի մէջ յեղափոխական շարժում չկար: Բուն իւր արարքն ոչ այլ ինչ էր բայց միայն աւաղակութիւն և մարդախոշոշութիւն:»

Լոնտոն Յունվ. 26.— Վիէննայէն կը հեռագրեն «Կլօպ»ին թէ վճռաբեկ ատեանըն հաստատեր է անցեալ Նոյեմբերի վըճիռըն որով Երնզայի դատարանն 58 Հայ դատապարտած էր: Անոնցմէ 24ն մահուան դատապարտուած են: Այս վճռոյ հաստատումն մեծապէս գրգռած է Երիզայի շրջակայ Հայերն:

Լ. Թայմզի մէջ կը կարդամք Պէռլինէն հեռագիր մի որ, ստոյգ աղբիւրէ կ'ասէ, թէ Դուռն դիտողութիւն արած է Պուլկարական գործակատար Տիար Տիմիթրոֆին՝ Վառնայի մէջ եղած այն միթինկներուն նկատմամբ յորս համակրութիւն արտայայտուած է Հայոց համար, և բռնաշունչ ատենախօսութիւններ ուղղուած են ընդդէմ Թուրք կառավարութեան: Վերջինս պահանջեց որ այդպիսի ցոյցեր զսպուին ապագային մէջ: Տիար Տիմիթրոֆ պատասխան տուաւ թէ կը ցաւի որ Թուրքիոյ կառավարութեան դիւրագգածութիւններն վիրաւորող ո և է բան պատահած լինի Պուլկարիայում, սակայն նըկատելով ժողովման իրաւունքն զոր Պուլկարական Սահմանադրութիւնն կ'երաշխաւորէ, միջամտութիւն անկարելի էր բայց միայն երբ հանրային անդորրութիւնըն խանգարէր:

Լ. Թայմզի մէկ հեռագրէն կը տեղեկանամք թէ յԱկն եւս խռովութիւնք պատահեր են:

ՅԱղէքսանդրիա հրատարակուող Էլ ՄԻՒՇԻՐ անուն Անգլիերէն և Արաբերէն նորահաստատ թերթին 10դ թուոյն մէջ կը կարդամք թէ Պէյրութի մէջ բնիկ քըրիստոնեայք մեծ տագնապ կը կրեն վասն զի բազում մահմետականներ զէնք և ռազմամթերք հանդերձեր են իրենց թաղերում: Երկիւղն այնքան մեծ է որ Քրիստոնեայ տիկնայք Ծնունդին եկեղեցի չգնացին գիշերուան պաշտամունքին: Քաղաքին Մահմետական երեւելիք, զգալով ծանր հետեւանքն եթէ խժդժութիւնք տեղի ունենան, բոլոր ուժով կ'աշխատին հանդարտել ազէտ ամբոխն: Անդորրութիւնն պահպանելու համար փողոցներն լեցուն են զօրօք և ոստիկանօք:

Բարիզում Փռանսերէն լեզուաւ շաբաթաթերթ մի հրատարակուիլ սկսած է Les Nouvelles d'Orient անունով որ է «Բերանն Փռանսական շահուց ի Թուրքիա:» Բովանդակ թերթն Հայկական Խնդրոյն նուիրեալ է, և յայժ լուրջ պարունակութիւն ունի: Հասցէն է 80 Rue de Bondy: Տարեկան բաժնեգինն է 10 Փրանք (երկու տոլար:)

Լոնտոն Յունուար 24. Հայկական Ընկերութեան Գործադիր Յանձնաժողովն հրաւէր ուղղեց խորհրդակցելու համար թէ ինչ քայլ պէտք է առնուլ Խորհրդարանին մէջ նկատմամբ Հայաստանի վատթարացող կացութեան և Դրան կողմանէ եւրոպեան թղթակցաց դէմ հանուած արգելքին:

Որովհետեւ Սրբազան ԻԶՄԻՐԼԵԱՆ ի Սասուն պատուիրակ մի յղելու դիտաւորութիւն յայտնած և Ռուսական, Փռանսական և Բրիտանական դեսպանաց հետ խորհրդակցած է, Սուլթանն իւր օտար թղթակցութեանց անձնական քարտուղարըն, զՄԻՒՆԻՐ Պէյ, առաքեր է հարցնելու որ Պատրիարքն բացատրէ իւր ընթացք և ձեւաբանէ իւր գանգատանք:

Բարիզի Հայ Գաղթականութեան վերաբերեալ լրոց մէջ կը յիշէ «Նուվէլ Տ'Օ-

ռիան» շաբաթաթերթն թէ Փռանսական Նախարարապետին Նորէն Նամակ մ'ուղղած են շնորհաւորելու կառավարութեան մտադրութիւնն Սասնոյ քննութեանց, թելադրելով որ արտասահման ապաստանած փախստականներն հարցաքննեն, որք Թրքական բռնութենէ աներկիւղ կրնան պատմել եղելութիւններն որոց ականատես եղած են։

ԱՐԹԻՆ ՓԱՓԱԶԵԱՆ և ԳԷՈՐԳ ՔԱՓԶԷՖ ստորագրութեամբ հեռագիր մի Լ. Տէյլի Նիւզին կը ծանուցանէ թէ Ռուսչուքի մէջ Հայք և Մակեդոնացիք, թուով 6,000, ժողով արին Սասնոյ կոտորածին և Մակեդոնիոյ աւաղակութեանց վերայ խորհրդածելու, և որոշեցին մեծ տէրութեանց դիմել աղերսագրով և աղաչել որ յանուն արդարութեան իրագործեն Պէռլինի դաշնագրին 61 և 23 յօդուածներն։

Տիար ՃԷՅՄՍ ՊՐԱՅՍ, Հայոց մեծանուն բարեկամն, Նորէն իւր քաղաքական ատենախօսութեան առաջին մասին մէջ Հայաստանի վիճակին Նկատմամբ խօսեր է ի Տարուէն, Լանքշայր, և յոյս յայտներ է թէ Ռուսիա պիտի աջակցի Անգլիոյ յիրագործել կարևոր բարեկարգութիւններն ի Հայաստան այնպէս որ այնպիսի կոտորածի կրկնութիւնն անհնար լինի։

Տիար ԿԼԱՏՍԹՈՆ, բարեկամաց Նամակներու պատասխանելով, յայտնած է թէ գիտաւորութիւն ունի Բրիտանական Խորհրդարանի Նիստերուն Ներկայ գտնուիլ և երեք մեծ խնդիրներու հակաճառութեան մտիլ, որոց մին է Հայկական Խնդիրն։

Կը յուսացուի թէ ի վերջկոյս Ապրիլի Թուրք Յանձնաժողովն կարող պիտի լինի Սասնոյ դէպքերուն վերայ իւր տեղեկագիր տալ։ Նոյն ատեն Դուռն բացարձակապէս կը մերժէ անկախ հարցափորձի դիւրութեան ընծայել, և յոյս չկայ որ այնպիսի հարցափորձ լինի։ Մամլոյ թղթակիցք որք անցեալներ ճամբայ ելան Սասուն երթալու, հասած են ի Կարին, սակայն տեղւոյն իշխանութիւնք հրաման չեն տար որ աւելի յառաջ երթան։ Դուռն տրամադիր չէ անոնցմէ ոև է մին արտաքսելու բայց հրահանգ տուած է Կարնոյ պաշտօնէից իմաց տալ թղթակցացն թէ իւրեանց ուղևորութիւնն ի վըտանգ իրենց անձանց պիտի փորձեն։ Այժմ իբրև պաշտօնական պատճառ կը Նըշանակուի այն թէ թղթակիցք վստահելի չեն, զի բնականօրէն իրենց տեղեկագրութեանց պիտի տան զայն գոյն որ կը յարմարի իրենց լրագրի Նախապաշարման։ Այնու հանդերձ հակաթրքական յուզմունքն կը շարունակուի Անգլիոյ մէկ ծայրէն ցմիւսն։

Ն. Ե. «Թրիպիուն» կ'ասէ. «Արդարև անկարելի է այսքան հեռուէն որոշել թէ արդեօք ճշմարի՞տ է այն տեղեկութիւն թէ 35 ամերիկացի ուսուցիչներ ի Թուրքիա բանտարկուած են։ Բայց եթէ ճըշմարտուի, կասկած չկայ թէ Նախագահ Քլիվլէնտի առաջին մղումն պիտի լինի Տիգրիսն ի վեր մարտանաւ մի յղել և Եփրատն ի վեր թորփիտօ-Նաւ մի, ... և Նախատեալ բայց յաղթանակող ամերիկեան դրօշն կանգնել Էքպատանի հռչակաւոր ամրութեանց վերայ և ի գագաթունս Մասեաց։ Այդ անմիջապէս Թրքաց, Պարսից և Քրդաց և այլ վայրենեաց, անպատասխանատու Միւսիւլմանաց, խելքը գլուխըն պիտի բերէր։

Պոսթոն Յունվ. 22. Միացեալ Նահանգաց Ներկայացուցիչ ԹԷՐԷԼ կը հեռագրէ Կ. Պոլսէն թէ Սուլթանն վերջապէս ստորագրած է արտօնագիրն աղջկանց Ամերիկեան գոլէճին համար յՕսմանեան մայրաքաղաքին։ Պօրտ ընկերութիւնն այս արտօնագիր ձեռք բերելու համար հինգ տարի աշխատած էր։

Էվանճէլիքըլ Էլլայէնս, որ միջազգային հզօր ընկերութիւն մ'է, և որոյ Նըպատակն է կրօնական ազատութեան դատըն յառաջ մղել ընդ բոլոր աշխարհ, եռանդով կ'աշխատի Նաև Տաճկաստանի Քրիստոնեայ հպատակաց ազատութեանն համար։ Անցեալ օր յատուկ պատգամաւորութիւն մի յղեցին ի Ուաշինկթըն և համոզեցին Կառավարութիւնն թէ հարկ է Թուրքիոյ մէջ Ամերիկեան հիւպատոսութիւն աւելցունել։

Տիար Էմմանուէլ ԲԱԴԼԵԱՆ վիրաբուժական և ախտաբուժական Հիւանդապահութեան դպրոցին մէջ, ի Նիւ Եորք, իւր ուսմանց և կրթութեան ընթացքն աւարտեր է և արժանացեր է երկրորդ մրցանակի։

Ուսաբրէն կը գրեն մեզ—

Ուսաբրի մէջ Ռումէնս անուն ամի երեւցաւ, և կեղծելով իբր Ն. Ե. Հէրալտի թղթակից, տեսնուեցաւ Հայոց հետ։ Հայք կասկածեցան թէ մարդն Ուսաբրի հայ առաջնորդներու անուններն հաւաքող լրտես մ'է, մանաւանդ երբ հեռագիրն ծանոյց թէ Հէրալտ չի ճանաչեր այդպիսի թղթակից, և Ռումէնս Հայերու բարկութենէն սարսափահար՝ խոյս տուաւ դէպ ի Պոլիս։

Թորոնթոյէն կը գրեն մեզ.—

Աւետարանական Դաշնակցութեան տարեկան ժողովոյն մէջ որ հոս տեղի ունեցաւ, որտեղուն ատենախօսութիւններ եղան թրքական գազանութեանց դէմ, և ուժգին որոշումներ քուէարկուելով յղուեցան Դաշնակցութեան Լոնտոնի Ցանձնախմբին։ Տր. Ֆիցվն, որ որոշումն երկրորդող ատենախօսն էր, ասաց, ի միջի այլոց, թէ «ուրախ պիտի լինէր թրքական կայսրութիւնն կտոր կտոր եղած տեսնել, և անոր մեծ գաւառներն թրքականէն դուրս ոչ է տէրութեան ներքև ինկած։»

Պալթիմորէն կը գրեն մեզ թէ քաղաքին բժշկական վարժարանին հայ ուսանողներէն մին Հայկական խնդրոյն վերայ ճառ մի խօսեր է վարժարանին դասասենեկաց միոյն մէջ, ուր ներկայ գտնուած են ուսուցչապետքն և ամերիկացի երկսեռ բազմութիւն։

Հայ ուսանողաց թիւն է, անդ, այս տարի, եօթն, որոց չորսն ընթացաւարտ պիտի լինին այս տարի։

Հարթֆըրթէն կը գրեն մեզ.

Պարոն Մ. Գէորգ Աղամալեան, որուն համար թղթակից մի գրած է թէ Ցոյն է, հոս մեզի ազէկ ծանօթ է, և Հայ է Հայու որդի։ Ինքը հոս մաս-միթինկ անելու գլխաւոր աշխատողն էր և եռանդուն ազգասէր երիտասարդ մըն է։

(Ուրախ եմք որ Պարոն Աղամալեան բարեմիտ հայ լինիլ կը վկայուի. կը խնդրեմք միայն որ թէ Պ. Աղամալեան և թէ ամեն ուրիշ գործիչ շատ զգուշութեամբ ստանայ և հաղորդէ լուրեր։ Ներկայ ժամանակս շատ փափուկ է։ ԽՄԲ.)

Ոմանք տալոր թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կամ Բէճիսթը անել նամակն կամ մընի օրտը յղել առ ի ապահովութիւն։

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Մշակի տարեկան բաժնեգինն է 5 տոլար։ Հասցէն է "Խմբագրութիւն Մշակի" (MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ Արձագանքի ևս պայմանն ու հասցէն նոյն է։

Լանմէնի-Արմէնիոն բաժնեգինն է 3 տոլար 75 սենթ. Հասցէն է—

33 De vere Gardens W, LONDON, ENG.

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար։

Բազմավէպի հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

Բազմավէպի նոր տարւոյ Ա թիւն չեմք ստացեր դեռ։

Հանդէս Ամսօրեայի Յունվար 1895ի բովանդակութիւնն է.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Մատենախօսական— Քանի մը նոր հրատարակութիւնք.— Տէր-Մկրտչեան Կարապետ Սարկ.։ Աշխարհագրական— Կուկաս։ Պատմական— Դրանսիլուանիոյ Հայոց մայրաքաղաքը (պատկերաւ)։ Բանաստեղծական— Ցիրուցան խորհուրդք— Ցոյս։ Ազգային— Ազգային ժողովրդական առածներ Տրապիզոնի կեանքէն քաղուած։ Ուղեգրական— Սեւ Ծովու ռուսական եզերքը ԺԱ։ Թղթակցութիւն։ Գրական— Մ. Խորենացի ըստ ուսուցչապետն Ն. Մառի.— Եղիշէի պատմութեան աղբիւրը։ Տաղանդական— Վարէնիա կամ Վարձունիք (պատկերաւ)։

Աճեռնացեալ

Մանրալուր.— Ճափոնի անցեալէն— Միաբանեալ Նահանգաց միլիոնատէրները— Հիւսիսային լրագրաց լրագրութիւնը— Ժանտի բակտերիա։ Տնտեսական— Փոշիներու վնասը.— Ցրտառութեան դէմ միջոց։ Նորալուր.— Մեքսիքոյի փութաջան աղոց մէկ առաւելութիւնը— Ճենասանի յառաջադիմութիւնն յամէ 1860։

Քաղաքական Տեսութիւն

Հանդէս Ամսօրեայի հասցէն է,
Redaction du HANTES,
Couvent Mechiharistes.
VIENNE, AUTRICHE



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԸԴՐՈՒԹԵՄՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ՝երթան. լաւ կերակուր և դինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յանձնորդներն։ Փոխառուներէն հակցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ բոլոր ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ՝է։ Ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետեւեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK

ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱԿԱՒ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

Բաւական թուով Պոլսոյ չէնքերու ֆոթոկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30 սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ գնով գրել հետեւեալ հասցէին.

H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
5 և 7 E. 10դ Փողոց
5դ Էվիւնիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր.

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to MUNN & CO., who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A Handbook of Information concerning Patents and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the Scientific American, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ